

Աստուած, Աստուած Լուսաւորչի, Ներսէսի,  
 Ուրեմն ա՛յս էր, փոխարէնն ա՛յս էր միթէ  
 Մեր աղօթքին, մեղրամոմին, կընդրուկին...  
 Արդ ունկընդրէ՛. Բնութեան հազար փապերէն,  
 Սեղաններէն զոհերու  
 Ջինջ աստղերէն կամ սըրտերէն մանկական՝  
 Ուր քեզ դողով կը պահեն՝  
 Ինձ ունկնդրէ՛. Յանճն այն  
 Ժողովուրդին՝ որ քեզ սիրեց եւ առանց  
 Քու օգնութեանդ խաչուեցաւ,  
 Յանճն անոր՝ որ ողջակեզ ըրաւ քեզ  
 Ոչխարներէն ամենէն կոյսն, ամենէն  
 Լըծընկեցն իր ցուլերուն,  
 Եւ իր գինին խըմորած  
 Սափորներու մէջ պորփիւր  
 Քու արիւնիդ սահմանեց.  
 Յանուն անոր՝ որուն սըրտին վրայ, դարեր,  
 Իբր ադամանդ կըռուանի  
 Կայծակնացով ոտքըդ դըրիւր, ուզեցիր  
 Որ կըրունկիդ տակ փըշրելով  
 Եղջիւրներն իր դիմամարտ՝  
 Սըրբարանիդ մարմարներուն վրայ միայն  
 Յոյսին ձեթերը վառէ.  
 Եւ յետոյ ա՛լ իր պաշտումէն՝ կըշտապինդ՝  
 Չայն, իբր Յիսուս մ'ամպերու մէջ թողլըքած,  
 Է՛լի լամա... ըրիւր քացախն իր՝ թունտոտ,  
 Կողին սիզակն՝ հաստաբուն,  
 Յանուն այդ հեզ ժողովուրդին կ'ըսեմ ես  
 Սա մըթընշաղ ժամուն մէջ ո՛ւր որ ըլլաս,  
 Ո՛ր աստղին մէջ եւ կամ ո՛ր  
 Թուխ ամպին վրայ շանթ ի բռին,